

նարք ցկայ որ լրանեցընեն Եւրոպա-
ցիք՝ ամէն բան դիւրութիք, քիչ ատենի
մէջ ու ապահով ընելու . մէկ շո-
գեշարժ մեքենայով հազարաւոր մար-
դու և կենդանեաց գործողութի կ'ը-
նեն . մէկ շոգեկառքով հարիւրաւոր
մարդիկ ու բեռներ քանի մը ժամու
մէջ երկու իրեք օրուան ձամբայ հե-
ռու տեղ կը տանին . երկըթէ ձամ-
բայ, երկըթէ կամուրջ, երկըթէ նա-
ւեր Եւրոպայի ամէն կողմերը շատնա-
լու վրայ են : Կարծես թէ միայն տը-
ները քարէ կամ փայտէ մնացեր էին .
քանի մը տարի է որ ասոնք ալ սկսան
երկըթէ շինելու : Խնդղիացիք ու Խ
մերիկացիք, անոնց նայելով նաև
Պիելճիացիք, սկսան աս ձարտարութը
բանեցընել, և աղուոր ու հաստա-
տուն տներ շինեցին թափծու երկը-
թէ, այնպէս որ ձմեռը տաք ըլլայ,
ամառը պազ . որ աղիւսէ կամ քարէ
շինուածները այսպէս չեն : Խայսպիսի
տները քիչ ժամանակի մէջ կը շինուին,
նոյնպէս ալ շուտ մը մէկ տեղէն մէ-
կալը կը տարուին : Խրակէ վախ չու-
նին . ան բաւական չէ, չար դրացիի
ձեռքէ ալ ազատելու խիստ յարմար
են . վասն զի սրտիդ ուզած ատենը
տանդ պտուտակները՝ կը քակես,
տունդ կ'առնես՝ ուրիշ տեղ մը կ'եր-
թաս, հոն նորին կը հաստատես :
Ուն որ կ'ուզես մէկ քաղաքէն մէկալը
կը տանիս նաւով, կամ երկըթէ ձամ-
բով : Դարբինին խանութին մէջ ամ-
բողը տունդ կը շինուի, և թափելէն
ութը օր ետքը ամէն բանը պատրաստ
կ'ըլլայ, այնպէս որ կրնաս մէջը ընա-
կիլ : Իրեք յարկով տասնը եօթը սե-
նեակով տուն մը գրեթէ 28 հազար
ֆրանք կ'արժէ . ծանրութիւնը կ'ըլ-
լայ 870 հազար քիլոկրամ : Խակ թէ
ինչպէս կը տաքնայ ըսես նէ, պիտի
գիտնաս որ աս տանս պատերուն մէ-
ջը պարապ ըլլալով բաւական է որ
քիչ մը միայն տաքցընես : Աւ ծուխ
կ'ելլէ, ոչ փոշի . սենեակներուն մէջ
ալ ածուխ պահելու հարկ չըլլար :

1 Պատմա :

ԱՐԴՐԱԳՈՒԹԻՒՆ

Հղագը օրոցին՝ մէջ հաղիւպելուն վնասները :

ԵՐԲՈՐ հարցընես մէկուն թէ ին.
չո՞ւ համարնոր ծնած տղաքը քանի որ
օրոցքին մէջ են՝ անգութ կերպով
կապկընելով սաստիկ կը պլէք, պա-
տասխան կուտայ թէ մենք ալ այն-
պէս տեսեր ենք, ուրիշներն ալ այս-
պէս կ'ընեն . և տղան այսպէս կա-
պուած ըլլալով օրոցքէն վար չգլորիր,
երեսը չանկընտեր, վրայի ծածկոցը
ոտուըներովը վար չգետեր . մէկ խօսքով,
ասանկ կապելը մեզի շատ հանգստու.
թիւն ու դիւրութիւն է, կ'ըսեն մայ-
րերն ու դայեակները . վասն զի մեր
տնական բանին գործքէն ետ չենք
մնար . և տղան թէպէտ ելայ՝ կանչէ,
ամենեին հոգերնիս չըլլար, որովհե-
տե կապուած է :

Դաղղիացի հեղինակներ ու բժիշկ-
ներ աս բանիս վնասները մէկիկ մէ-
կիկ ցցուցին երկար ատեն . և վերջա-
պէս ոչ միայն Դաղղիայէն, հապա-
նաե Եւրոպայի ուրիշ շատ կողմերէն
տղաքը կապերով պատելուն սովորու.
թիւնը վերցուեցաւ : Խակ արեելք ին,
չուան հիմա խեղճ տղոց ձեռուընե-
րը, ոտուըները ու ամբողջ մարմինը
չարաչար կը պլէն . և գուցէ շատ ան-
գամանոնց լալուն պատճառը՝ աս կա-
պերուն ցաւէն է :

Դսոր գլխաւոր վնասներէն մէկքա-
նին հոս գնենք, որպէս զի մայրերը
իմանան թէ ինչպէս որ նոր սովորու-
թեանց, այսպէս ալ ամէն հին սովո-
րութեանց պէտք չէ կոյր զկուրայն
հետեիլ . հապա վնասակարն ու օգ-
տակարը աղէկ հասկընալ, և ըստ
այնմ շարժիլ :

Ա. Հղան կապերու մէջ չարաչար
պլուած մնալով, յայտնի է որ ան-
գամները չեն կրնար արձակ համար-
ձակ ածիլ . և օրոցքին մէջ մի և նոյն

1 Պատմա :

դիրքով գամուածի պէս անշարժ կենալովը, չկրնար հանգիստ քնանալ, հապա միշտ կէս քուն կ'ըլլայ և ստէպ ստէպ կ'արթըննայ . վասն զի արիւնը գլխուն մէջ ժողովուելով՝ տղուն վրայ կէս քունի պէս թմրութիւն մը կը բերէ . և աս սաստիկ կապելուն պատճառաւն է որ արեւլք տղաքը ուշ ալ ոտք կ'ելլէն :

Բ . Ծղուն այսպէս կապուած մնալով՝ արիւնը չկրնար ամէն տեղ իր համարձակ շրջանն ընել . հապա ուր տեղն որ չարաչար կը սխմուի բընական է որ հօն տեղի արիւնը երակին մէջ չսըղմելով՝ կ'ուզէ ազատ տեղ մը ժողովիլ . և որովհետեւ տղուն բաց 'ի գլխէն ամէն տեղը չարաչար պլուած է, ուստի բոլոր արիւնը կ'երթայ ըղեղին վրայ պատած երակներուն մէջ կը լեցուի . անով տղան ստէպ ստէպ կը հիւանդանայ :

Գ . Լապերուն պատճառաւը տղուն փորն ու կուրծքը սաստիկ կը ձնչըւին . անով աղիքները, ստամոքսը, լերդը, թոքը, սիրտը, ու բոլոր մնունդ առնելու գործարանները մեծ նեղութիւն կը քաշեն :

Դ . Լապերով տղուն փորը սխմուելով՝ շատ անգամ նոր ծծած կաթը վեր վեր կուտայ ձգուտալով, կերածը չկրնար աղէկ մարսել . անով փորը ձընջիներ կը գոյանան ու կը վատումնայ, և ուրիշ տեսակ տեսակ աղեաց հիւանդութիւններ կ'ունենայ :

Ե . Կուրծքը սաստիկ պլուած ըլլալով՝ վրան մարմրուք ալ կուգայ, որ շատ անգամ ինչուան մահուան վտանգը կը հասցընէ խեղջ տղան . նոյնպէս կապելէն առաջ կուգան շընչարգելութիւն ու հազ՝ որ թոքին վընասուելէն կը պատճառի :

Զ . Կոր ծնած տղուն ազդրը, սրբունքները, ոտուըները, թերերը, ձեռուըները, կողերը բնութեամբ ծուռ կ'ըլլան . և երբոր կապերով սաստիկ սխմուելու ըլլան՝ բնական է որ անդամներուն յօդուածները կամ բոլորովին կը շտկուին, և կամ իսիստ ծուռ-

ումուռ կ'ըլլան . ասով բնութեան դրած անդամներուն դրքին գեղեցկութիւնը կը տգեղնայ, և կողերն ու փորը բռնութիւն կրելով՝ աղեաց բընական դիրքն ալ կ'այլայլի : Ի՞ս պատճառաւ շատ անգամ տղոց ոտուըները, ձեռուըները պակասաւոր կ'ըլլան, և կուրծքերնին կամ կոնակնին կուզի պէս դուրս կը տնկուին, և պատճառը աս վնասակար կապն է :

Ի՞ս Փիզիգական վնասներէն առաջ կուգան նաև բարոյական վնասները, որ այսպիսիները սովորաբար բարկացող ու սրտնեղ կ'ըլլան: Ուստի Ա իւնէյ անունով երեւելի հեղինակը աս կապերուն վրայ խօսելու ատեն շատ աղէկ կ'ըսէ, թէ “ Ծղոց անդամները „, աս կերպով կապկըպելը, ասանկ „, խեղջ դիրքի մէջ թողուլը, անոնց „, սիրտը բոլոր իրենց կենացը մէջ „, անգթութեան, ստահակութեան, „, և զուրիները իրենց կամացը գերի „, ընելու կը վարժեցընէ „ :

Մ'ենք կը մեղադրենք ան բարբարոս ժողովուրդները, որ անգթութեամբ իրենց տղոցը զլուխները ձեփ բերելու համար կը սխմեն, և ոտուըները պզտիկ ու բարակ մնալու համարերկը մանր մուծակներու մէջ կը դնեն . և մեր չարաչար կապկըպելը ամեննեին բանի տեղ չենք դներ, որ նոյն աստիճանի անգթութիւն է :

Խակ թէ առանց կապի ինչպէս պիտի ըլլայ, ահաւասիկ հոս կը դնենք դիւրին կերպը, որ առանց վնասու տըզան հանգիստ մնայ: Խւ նախ պէտք է մարդ իր մաքէն հանէ աս նախապաշարմունքը՝ թէ առանց կապկըպելու տղոց մարմինը համեմատ ձե ու գեղեցկութիւն չառներ: Ի՞սա Ո բաստանցիք ու Սկըրբէզները՝ որ գեղեցկութեան կողմանէ այնչափ անուանի են՝ իրենց տղաքը ամեննեին չեն կապեր:

Խրաւ է որ նոյն սովորական կապը թոյլ բռնելով ալ կրնայ ըլլալ՝ որ վերոյիշեալ վնասներէն ազատ մնան տըզաքը . բայց որովհետեւ ամէն անգա-

մունուշաղրութիւնը ընելը կամ թոյլ
բռնելու չափը գիտնալը դժուար կ'ե-
րենայ, անոր համար պէտք է այնպի-
սի կերպ մը գտնել, որ նախ սովորա-
կանէն աւելի պարզ ու դիւրին ըլլայ .
երկրորդ՝ աւելի դիւրաւ դրուի ու
վերցուի . երրորդ՝ դիւրին կերպով
քակուի ու փոխուի : ՚՚ս բանիս հա-
մար ՚յրոպացիք կ'առնեն տղուն
մարմնոյն մեծութեամբը քառակու-
սի լաթ մը, որուն հիւսուածքը խիտ
ըլլայ . ան լաթը տղուն երկու թեկին
տակէն թոյլ կերպով մը կ'առնեն կը
պլլէն, և իրեք տեղէն իրեք հատ եր-
կայն ու լայն երիզներով՝ կը կապէն .
առջի երիզը անմիջապէս թեկին տա-
կէն առած՝ կուրծքին վրայ կրկին ան-
գամ կը պլլէն . երկրորդն ալ նոյնպէս
փորուն վրայ կը կապէն . իսկ երրոր-
դը ծունկին վրայէն, բայց միշտ թոյլ
ընելով կապերը՝ որ պէտք եղած ա-
տենը դիւրաւ քակուին ու կապուին :

՚յտքը տղուն կը հագցնեն կտաւէ
կամ բամբակէ բամկոն մը՝ ետեւի
կողմը բաց, և ուսին վրայի կողմէն
կապերով հանկուրցած : ՚՚ս բամկոնը
օդին տաքութեանն ու պաղութեա-
նը համեմատ կրնայ բարակ ու հաստ
ըլլալ . իսկ ոտուըները ամառը բաց կը
թողուն, ու ձմեռը կտաւէ կամ բամ-
բակէ լաթով մը կը պլլէն : ՚յլուխը
առջի բերան կը պլլէն՝ քանի որ մազ
չունի տղան . իսկ մազ բուսնելէն ետ-
քը ամենւին չեն պլլեր . վասն զի
սրտէն դէպ'ի գլուխը գնացած արիւ-
նը շատ ըլլալով՝ բնական կերպով բա-
ւական կը տաքցընէ . իսկ թէ որ լաթ
ալ պլլէս, ան ատեն աւելի կը տաք-
նայ, և ըղեղին վնաս կրնայ տալ :

Տղան այսպէս հագուեցընելէն ետ-
քը կը պառկեցընեն օրոցքին մէջ, կը
նային որ երկու կողմերը աւելի բարձր
ըլլան . իսկ վրայի ծածկոցը բարակ
երիզներով անկողնին հետ կը կապէն .
թէ որ տղան աւելի աշխոյժ ու կրա-
կոտ ըլլայ, որպէս զի օրոցքին վար իս-

նալու վտանգ մը չպատահի՝ երկայն
երիզով մը կոնըկէն ալ դէպ'ի կուրծ-
քը խաչաձեւ կը պլլէն ու օրոցքին կը
կապէն : ՚՚ս աս կերպով տղան
կապին վտանգներէն ազատ կը մնայ,
համարձակ կը շարժի, անդամները
արձակ համարձակ կը մեծնան, և դիւ-
րաւ ալ ոտք կ'ելլէ :

Կապուած շան խածուածուին դէշ:

՚յրբոր կատաղի շուն մը խածնելու
ըլլայ, մէկէն պէտք է խածած տեղը
սաստիկ ձզմել, որպէս զի հոն տեղի
արիւնն ու շան լորձունքը դուրս ել-
լէ . ետքը նոյն խածուած տեղը ջրով
խառնած ցնդական ալքալիով, կամ
մոխրաջրով, կամ սապոնի ջրով, կամ
համեմի ջրով շուտ մը լուալու է . և
թէ որ աս ջրերը չգտնուին, պարզ
ջուրն ալքաւական է . ետքը սաստիկ
տաքցուցած երկաթի կտորով մը նոյն
տեղը այրելու է :

Վարէն կաղած արէւնը բանելու հարբ:

՚՚ս հնարքս գտաւ՝ ՚յեկրիէ անու-
նով գաղղիացի բժիշկը, որ կ'ըսէ թէ
երբոր մէկուն քթէն շատ արիւն գայ՝
պէտք է մէկ թեր վեր բարձրացընէ,
ու մէկալովը արիւնը քթին որ ծա-
կէն որ կուգայ՝ ան ծակը գոցէ, շուտ
մը կը դադրի :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԵՄԱՅՈՒՆ շահ :

ՀԻՒՄԱՑՈՒՆ՝ ՚յասրէտտին ԱՌէհէմ
մէտ շահը Պապէր շահին որդին էր, և
ծնաւ ՚յապուլ քաղաքին մէջ 1508^{ան} .
՚՚սիկայ 1526^{ան} հօրը հետ մէկտեղ
հնդկաստան գնաց . Փանիփաթի մե-